ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 159.9.019:32

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի ժամանակաշրջանում հատկապես կարևորվում են ոչ միայն հոգեբանության, այլև հատկապես քաղաքական հոգեբանության դերն ու նշանակությունը: Դինամիկ փոփոխվող աշխարհը պարտադրում է զգոն լինել մարտահրավերների նկատմամբ և ժամանակին ըմբռնել հասարակական հարաբերությունների պատճառներն ու հիմքերը: Դիտարկվում է քաղաքական հոգեբանության դերն ու նշանակությունը քաղաքական գործընթացների վրա:

Առանցքային բառեր. քաղաքական հոգեբանություն, քաղաքական գործընթաց, հույզեր, զգացմունքներ, քաղաքական ազդեցություն, քաղաքական հոգեբանության կառուցվածք:

Հոգևոր գործոնների ազդեցությունը քաղաքականության վրա չի սահմանափակվում մարդկանց վրա գաղափարական հայեցակարգերի և ծրագրերի ազդեցությամբ: Ոչ հազվադեպ, այլ երբեմն նույնիսկ շատ հաճախ առավել նշանակալի ազդեցություն քաղաքականության վրա ունենում է քաղաքական գիտակցության այնպիսի ձևը, ինչպիսին քաղաքական հոգեբանությունն է: Այն ներկայացնում է հուզա-զգայական պատկերացումներ ու զգացումներ քաղաքական երևույթների նկատմամբ, ինչպես նաև ձևավորում է մարդկանց քաղաքական վարքագիծը և փոխհարաբերությունները ինստիտուտների նկատմամբ:

Հարկ է նշել, որ շատ գիտնականներ են անդրադարձել քաղաքականության վրա քաղաքական հույզերի և զգացումների ունեցած ազդեցություններին: Դեռևս մ.թ.ա. Հին Հունաստանում այդ խնդրի վերաբերյալ իր մեկնաբանություններն է կատարել Արիստոտելը: Նա, քաղաքականությունը համարելով որպես պետության և քաղաքացիների հարաբերության ձև, գրել է,որ ղեկավարները. «ավելի լավ է իմանան ապստամբություն բարձրացնող անհատների տրամադրվածությունը...քան ըստ էության արդեն իսկ սկսված խառնակչությունները հարթեն» [1]: Դեկարդը գրել է վեց զգայարանների մասին, որոնք մարդուն առաջնորդում են թե՛ աշխարհում և թե՛ իշխանության մեջ: Ն. Մաքիավելլին այն հաոզմանն էր,

որ «կառավարել, նշանակում էր - ստիպել մարդկանց հավատան քեզ»: Նա հատուկ նշում էր,որ տրամադրության տարբերության հիմնական պատճառը «բոլոր գժտություններն են, որոնք տեղի են ունենում պետության մեջ» [2]:

Քաղաքական հոգեբանությունը, ընդհանուր առմամբ, բնութագրում է հար և նման /անհատականից մինչև զանգվածային/ աֆեկտները: Այն ներառում է մարդու ինչպես բազմակողմանի զգացումներն ու հույզերը, որոնք առանձնահատուկ ձևով ներթափանցում են քաղաքական կյանք /զայրույթ, սեր, ատելություն և այլն/, այնպես էլ այն զգացողությունները, որոնք հանդիպում են միայն քաղաքական կյանքում / համակրանք կամ հակակրանք այս կամ այն գաղափարի կամ լիդերի նկատմամբ/, սակայն այս զգացումների և հույզերի տարբեր դերերը ենթադրում են հոգեբանության երկակի նշանակությունը քաղաքական կյանքում:

Մի կողմից՝ այն հանդես է գալիս որպես հոգևոր երևույթ,որը միջնորդավորում է քաղաքական մտածողության բոլոր տարատեսակները և մարդու վարքագիծը, ձևավորում բոլոր սուբյեկտիվ երևույթները, նրա տեսական և գործնական ակտիվությունը, և այս առումով քաղաքական հոգեբանությունը ներկայացնում է մարդկային պատկերացումներում ձևավորված այն ներքին մեխանիզմները, որոնք օրգանապես համակցված են քաղաքական գործընթացներին, սակայն դրանով հանդերձ՝ հնարավոր է, որ նրանք ոչ մի էական ինքնուրույն դերակատարություն չունենան մարդու վարքագծում: Հարկ է նշել, որ իշխանությունը, պետությունը, կուսակցությունները, ինչպես նաև քաղաքական սուբյեկտների այլ գործողություններ ներկայացնում են մարդկանց վրա հոգեբանական ազդեցության որոշակի ձև:

Մյուս կողմից՝ կարելի է փաստել, որ քաղաքական հոգեբանությունը ներկայացնում է քաղաքական մտածողության գենետիկ առաջնային, հուզական-գնահատողական հակազդեցությունը և այն յուրահատուկ հոգևոր գործոնը, որը ինքնուրույն կարողանում է ներգործել մոտիվացիայի մշակման և մարդու քաղաքական վարքագծի վրա, դրանով իսկ տարբերելով, օրինակ, նրա ռացիոնալ կամ գնահատողական մղումները:

Հարկ է նշել,որ հոգեբանական գործոնները առավել վառ են արտահայտվում պետության համար շրջադարձային պահերին /քաղաքական արենայում հեղափոխական փոփոխությունների կայացման պայմաններում շատ մարդկանց մոտ տեղի է ունենում հուզական-զգայական ֆոնի սրացում, անհավասարակշիռ պահվածք (օրինակ՝ Հայաստանում 2018թ.ապլիլին՝ թավշյա հեղափոխության ժամանակ):

Քաղաքական հոգեբանության որպես քաղաքական գործընթացների յուրահատուկ գործոնի դիտարկումը մեզ հնարավորություն է տալիս՝ բացահայտելու նրա յուրահատկությունները, առանձնահատուկ գծերը, ի ցույց դնելու քաղաքական զգացմունքների և հույզերի՝ որպես քաղաքական գիտակցության առավել դինամիկ մասի, որն կազմակերպում և ուղղորդում է լիդերի, պետության, իշխանության սուբյեկտիվ կերպարը, որը ամփոփված է մարդու մեջ: Հատկապես զգացմունքները մարդուն ստիպում են գնահատել քաղաքական երևույթը՝ կախված ոչ թե դրանց իրական բովանդակությունից, այլ թե ինչպես են դրանք արտացոլվում գիտակցության մեջ: Օրինակ՝ անվստահությունն այս կամ այն կուսակցության, ռեժիմի նկատմամբ ձևավորվում է ոչ թե նրանց ծրագրերի վերլուծության հետևանքով, այլ, ասենք, համակրանքի կամ հակակրանքի,կամ էլ կարող է առաջանալ որևէ ոչ կոռեկտ արտահայտության հետևանքով: Վերոնշյալից ելնելով՝ կարող ենք փաստել, որ մարդը քաղաքական իրականությունը շատ հաճախ տեսնում է այնպես, ինչպես այն պատկերանում է նրա զգացմունքներում, պատկերացումներում, ինչի պատճառով այն կարող է ոչ համարժեք արտացոլել իրականությունը իր բոլոր հետևանքով:

Իմանալով հոգեբանական կերպարի ձևավորման օրենքները, կարելի է տարբերակել դրանց կառուցվածքը, ուղղվածությունը, դրանով իսկ հնարավորություն ստեղծելով ներազդելու պետության նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա: Պատմության ընթացքում նման երևույթները հաճախ են հանդիպել, երբ օրհասական պահերին լիդերը կարողացել է համախմբել մարդկանց, ազդել նրանց գիտակցության վրա, կամ շեղել զանգվածների ուշադրությունը կարևոր խնդիրներից՝ ուղղորդելով նրանց իրեն ցանկալի ուղղությամբ:

Քաղաքական գործընթացների վրա հոգեբանական ազդեցությունը առավելապես կարելի է կանոնակարգել հետևյալ կերպ.

• Տվյալ մարդու ձգտումը՝ ներկայացնելու իրեն քաղաքական գործընթացներում որպես կարևոր անձի, ինչը շատ դեպքերում նրան դարձնում է կամազուրկ /օրինակ՝ ընտրություններում իր նախընտրած թեկնածուի չընտրվելը կարող է դիտարկել որպես անձնական ողբերգություն, կամ ընդհակառակը/:

• Անձի նույնականացումը կուսակցության կամ մասնագիտության հետ /օրինակ՝ կուսակցության նպատակների, ծրագրային դրույթների նույնականացումը իր կյանքի նպատակներին/:

• Լիդերի, հեղինակության նկատմամբ ընդգծված հուզական վերաբերմունքը:

• Անձի անբնական ու անվերապահ համերաշխությունն ու համաձայնողականությունը տվյալ քաղաքական կազմակերպությանը /արդյունքում՝ նման

կորպորատիվիզմը շատ հաճախ փոխարինելու է գալիս ընտանեկան կարևոր արժեքներին/:

Կոշտ ռեժիմների կառավարման պարագայում ներքին հոգեբանական երևույթների և իշխանության կառույցների միջև համապատասխանության խնդիրը, որպես դասական օրինակ, վերլուծության է ենթարկել ամերիկացի գիտնական Տ.Ադորնոն: Նա անդրադարձ կատարեց «ավտորիտար» տիպի անհատին, ով իր կարծրատիպերով սատարում է այդ իշխանության ագրեսիվությունը, անսխալականությունը, անհանդուրժողականությունը քննադատության հանդեպ և այլն:

Ինչպես հաստատում են բազմաթիվ վերլուծությունները, քաղաքական ծայրահեղականությունը /էքստրեմիզմ/ հենվում է մարդկանց իռացիոնալ մոտիվացվածության վրա, որը շատ հաճախ մարդու աղավաղված հոգեկերտվածքի հետևանք է, ինչը արգելակում է նրա ռացիոնալ մտածողությունը: Սոցիոլոգիական որոշ հետազոտությունների տվյալներով, որոնք իրականացվել են աջ և ձախ ծայրահեղականների շրջանակներում, պարզվել է, որ համեմատած այլ քաղաքական ուժերի հետ՝ նրանք շատ հաճախ են իրենց մեկուսացված են զգում, կյանքը համարում են անիմաստ, իսկ ապագան՝ մշուշոտ: Նման հոգեբանական երևույթները հիմք են հանդիսանում քաղաքական իրադարձություններին մարդկանց չմիջնորդավորված, ուղղակի մասնակցության համար, հարկադրում նրանց համարժեք գործողությունների /կանչին կանչով, հարվածին՝ հարվածով/ հիմք ստեղծելով, հասնել նպատակին՝ առանց մեթոդների միջև խտրականության:

Պատմության ընթացքում հատուկ դերակատարություն են ունեցել այն տիպի լիդերները, որոնց հոգեկերտվածքը, գործունեության ձևը մեծ ազդեցություն են գործել պետական որոշումների, երբեմն նույնիսկ քաղաքական համակարգերի վրա: Գ.Լասուելը գտնում էր, որ քաղաքականության պատմությունը հասարակությունը կառավարող անհատի հոգեկերտվածքի պատմությունն է: Դա է պատճառը, որ ժամանակակից գիտության մեջ մեծ տարածում է ստացել հոգեկենսագրական ուղղությունը, որն ուսումնասիրում է 20-րդ դարի հայտնի պետական, քաղաքական գործիչների կենսագրությունը /Մաո Ցզեդուն, Ստալին, Հիտլեր/: Որոշ հետազոտողներ հոգեպաթալոգիան դիտարկում են որպես անհատական առանձնահատկություն: Բնական է, որ նման պարագայում պետք է ուսումնասիրել տվյալ լիդերի մանկությունը, նախասիրությունները, երևակայելու ունակությունը, մանկական մտածմունքները, շրջապատը և այլն: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ անմիջական կապ տեսան ԽՍՀՄ-ում և Գերմանիայում երկու լիդերների՝ Ստալինի և Հիտլերի միջև, որոնք գրեթե նույն ժամանակահատվածում ստեղծեցին ավտորիտար ռեժիմներ: Նրանք երկուսն էլ մեծացել

էին ոչ լիարժեք ընտանիքներում, Հիտլերը սովորել էր Վիեննայի գիշերօթիկում, որտեղ բռնատիրական պայմաններ էին, իսկ Ստալինը՝ Թիֆլիսի սեմինարիայում,որտեղ գրեթե նույն բարքերն էին: Բնական է, որ նման պայմանները մեծ ազդեցություն էր գործել նրանց բնավորության, հոգեկերտվածքի վրա:

Ժամանակակից շատ վերլուծաբաններ այն համոզմունքն են հայտնում, որ քաղաքական գործընթացները, իրավամբ, կախված են լիդերի բնավորությունից, անհատական մոտեցումներից, հոգեկերտվածքից. օրինակ՝ լիդերի **կոմպուլսիվ** տիպերը ձգտում են իդեալին և ցանկանալով ամեն ինչ անել անթերի՝ հաճախ չեն կարողանում արտաքին հարաբերություններում ճկունություն հանդես բերել, իսկ «դերասան» տիպի լիդերները իրենց քաղաքական գործունեության հիմնական իմաստը տեսնում են այն բանում, որ մշտապես լինեն ուշադրության կենտրոնում, իսկ **դեպրեսիվ** տիպի լիդերների գործունեությունը հիմնականում միտված է սեփական կարգավիճակի պահպանմանը և ձգտումը՝ քաղաքականության մեջ գործող առավել հզոր քաղաքական գործչի հետ միավորվելուն [3]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ քաղաքական հոգեբանությունը ներառում է.

1. սոցիալ-հոգեբանական հույզեր,
2. անհատական-հոգեբանական տարրեր,
3. ֆունկցիոնալ-ֆիզոլոգիական տարրեր,
4. հոգեֆիզիկական առանձնահատկություններ:

Կարելի է ասել, որ քաղաքական հոգեբանությունը ներառում է ինչպես գիտակցական-ռացիոնալ, այնպես էլ անգիտակցական-իռացիոնալ հոգեբանական տարրեր, ինչի շնորհիվ հոգեբանությունն ընդգրկում է սոցիալական ներգործության իմպուլսներ:

Պատմությունից հայտնի է, որ շատ լիդերներ մարդկանց մեջ դիտավորյալ առաջացնում են իռացիոնալ զգացումներ, որպեսզի մեծացնեն կախվածությունը իշխանությունից, առաջնորդից, գաղափարից: Հարկ է նշել, որ Առաջին համաշխարհայինի տարիներին թուրքերն իրենց նպատակին հասնելու՝ հայ ժողովրդին իրենց բնօրրանից զրկելու, ֆիզիկապես ոչնչացնելու համար դիմեցին այդ նողկալի մեթոդին՝ քրդերին ուղղորդելով հայերի դեմ: Հետագայում նացիստները ևս, օգտագործելով նմանատիպ մեթոդներ, բազմաթիվ թատերականացված գործողություններ իրականացրին՝ մարդկանց վրա հոգեբանական ճնշում գործելու նպատակով /օրինակ՝ գիշերային ջահեր, հավաքներ, երթեր, նպատակ ունենալով ձևավորելու անհաշվետու հասարակություն, որը ընդունակ կլինի պաշտելու միայն ֆյուրերին և Ռայխին):

Բնական է, որ հետագայում նման մեթոդների դիմեցին բռնապետական, ավտորիտար, ամբողջատիրական ռեժիմների շատ առաջնորդներ, որոնց նպատակը իշխանության հարատևության պահպանումն էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Аристотель**. Политика.- М., 1911. - 208 с.
2. **Макиавелли Н**. История Флоренции. -Л., 1973. -99 с.
3. **Дилигенский Г.** Социально-политическая психология.- М., 1994. -278 с.

Н.К. БАГДАСАРЯН

СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОЙ ПСИХОЛОГИИ

В наше время важное значение имеют роль и значение психологии и, в особенности, политической психологии. Динамично меняющийся мир заставляет нас быть внимательными к вызовам и своевременно понимать причины и основы общественных отношений. В статье рассматриваются роль и значение политической психологии в политических процессах.

Ключевые слова: политическая психология, политический процесс, эмоции, чувства,политическое влияние, структура политической психологии.

N.Q. BAGHDASARYAN

THE ESSENCE AND CHARACTERISTICS OF POLITICAL PSYCHOLOGY

In modern times, the role and significance of psychology, especially political psychology are particularly important. The dynamically changing world makes us be alert to the challenges, and timely understand the causes and bases of public relations. The article considers the role and significance of political psychology in political processes.

Keywords: political psychology, political process, emotions, political influence, structure of political psychology.